



Հ Ա Ս Տ Ա Տ ՈՒ Մ Ե Մ
ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Վ. ԱՅՎԱԶՅԱՆ

«28» 10 2005թ.



ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՓՈՐՁԱԲՆԱԿՈՒԹՅՈՒՆ» ՊՈԱԿ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱԲՆԱԿԱՆ

ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

ԲՓ - 113

Տրված է՝

ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն
ք. Երևան, Մելիք-Աղամյան 1

Գործունեությունը՝

Հազարամյակի մարտահրավերների հիմնադրամի
շրջանակներում օժանդակության տրամադրման հայտի
«Շրջակա միջավայրի ազդեցության գնահատման» (ՇՄԱԳ)
վերաբերյալ

Առդիր՝ եզրակացությունը 3 էջ:

ՏՆՕՐԵՆ



Ա. ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

ՀՀ բնապահպանության նախարարություն
«Բնապահպանական փորձաքննություն» ՊՈԱԿ

Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական

ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ թիվ ԲՓ 119

«28» 10 2005թ.

**Հազարամյակի մարտահրավերների հիմնադրամի շրջանակներում
օժանդակության տրամադրման հայտի «Շրջակա միջավայրի ազդեցության
գնահատման» (ՇՄԱԳ) վերաբերյալ**

ՀՀ կառավարության կողմից ներկայացված հայտը հետամուտ է ֆինանսական օժանդակություն ստանալ Հազարամյակի մարտահրավերների հիմնադրամից, որի շրջանակներում նախատեսվում է 5 տարվա ընթացքում օժանդակել ոռոգման և համայնքային ճանապարհների ոլորտներում ռազմավարական ներդրումների կատարմանը, որոնց նպատակն է երկրի աղքատ գյուղական շրջաններում ընդլայնել գյուղատնտեսական արտադրանքի ծավալները:

Հայաստանում գյուղատնտեսության արդյունավետության բարձրացման համար գոյություն ունի հիմնականում երկու նախապայման.

- ներդրումներ ոռոգման համակարգում,
- ներդրումներ համայնքային ճանապարհային ցանցում:

Ծրագիրը նախատեսում է 23 ոռոգման համակարգերի վերանորոգում, վերականգնում, կառուցում:

Համակարգ թիվ 01-ը Արտաշատի համակարգն է, որտեղ նախատեսվում է.

- Արտաշատի մայր ջրանցքի 21 կմ հատվածի վերակառուցում,
- 14 պոմպակայանների վերակառուցում,
- Այգեզարդ ինքնահոս ոռոգման համակարգի կառուցում,
- շուրջ 4600 հա հողատարածքների ներտնտեսական ցանցերի վերականգնում:

Համակարգ թիվ 02-ը Ստորին Հրազդանի համակարգն է, որտեղ նախատեսվում է.

- Ստորին Հրազդան մայր ջրանցքի 24.9 կմ հատվածի վերակառուցում,
- 11 պոմպակայանների վերականգնում,
- շուրջ 350 հա հողատարածքների ներտնտեսական ցանցերի վերանորոգում:

Համակարգ թիվ 03-ը Արմավիրի համակարգն է, որտեղ նախատեսվում է.

- Արմավիրի մայր ջրանցքի 32.47 կմ հատվածի երեսպատում,
- 7 պոմպակայանների վերականգնում,
- շուրջ 6000 հա հողատարածքների ներտնտեսական ցանցերի վերանորոգում:

Համակարգ թիվ 04-ը Թալինի համակարգն է, որտեղ նախատեսվում է.

- մայր ջրանցքի 40.89 կմ հատվածների վերականգնում,
- 6 պոմպակայանների վերականգնում,
- շենիկ ինքնահոս ոռոգման սխեմայի կառուցում,
- Սասնաշենի ջրամբարի կառուցում:

Համակարգ թիվ 05-ը Արգնի-Շամիրամ համակարգն է, որտեղ նախատեսվում է.

- մայր ջրանցքի 34.15 կմ հատվածի վերականգնում,
- 5 պոմպակայանների վերականգնում,
- Աշտարակ ինքնահոս ոռոգման սխեմայի կառուցում,
- Ափնա, Օրգով և Լեռնարոտ ջրամբարների կառուցում,
- շուրջ 4200 հա հողատարածքների ներտնտեսային ցանցերի վերանորոգում:

Համակարգ թիվ 06-ը Շիրակի համակարգն է, որտեղ նախատեսվում է.

- Շիրակի մայր ջրանցքի 40 կմ հատվածի վերականգնում,

- Կապսի ինքնահոս ոռոգման համակարգի կառուցում,
 - Թավշուտի ինքնահոս ոռոգման սխեմայի կառուցում,
 - Կապսի ջրամբարի կառուցում,
 - 2300 հա հողատարածքների ներտնտեսական ցանցերի վերանորոգում:
- Համակարգ թիվ 07-ը Գեղարքունիքի համակարգն է, որտեղ նախատեսվում է.
- Ագրիջայի ինքնահոս համակարգի կառուցում,
 - Վարդենիսի ինքնահոս համակարգի կառուցում,
 - Ագրիջայի ջրամբարի կառուցում,
 - 4 պոմպակայանների վերականգնում,
 - 980 հա տարածքի ներտնտեսական ցանցերի վերականգնում:
- Համակարգ թիվ 08-ը Վայոց Ձորի համակարգն է, որտեղ նախատեսվում է.
- Խնձորուտի ինքնահոս համակարգի և ջրամբարի կառուցում,
 - Խնձորուտի ջրամբարի կառուցում,
 - 1500 հա ներտնտեսական ցանցերի վերականգնում:
- Համակարգ թիվ 09-ը Ապարանի համակարգն է, որտեղ նախատեսվում է.
- 12 կմ երկարությամբ ջրագծի կառուցում՝ Հալափարի ջրամբարից,
 - Վարդենուտի ջրամբարի կառուցում,
 - 500 հա հողատարածքի ներտնտեսական ցանցերի վերականգնում:
- Համակարգ թիվ 10-ը Գեղարդալիճ համակարգն է, որտեղ նախատեսվում է.
- Գեղարդալիճ ինքնահոս համակարգի կառուցում,
 - 2 պոմպակայանների վերականգնում,
 - 350 հա-ի համար ներտնտեսական ցանցերի վերականգնում:
- Համակարգ թիվ 11-ը Մեղրիի համակարգն է, որտեղ նախատեսվում է.
- Մեղրու ինքնահոս համակարգի՝ ներառյալ Լիճքի ջրամբարի կառուցում,
 - 585 հա-ի վրա ներտնտեսական ցանցի վերականգնում:
- Համակարգ թիվ 12-ը Արթիկի համակարգն է, որտեղ նախատեսվում է.
- Մանթաշի ինքնահոս համակարգի կառուցում,
 - Արթիկի ջրամբարի վերականգնում,
 - Բագրավանի ջրամբարի կառուցում,
 - 370 հա ներտնտեսական ցանցերի վերականգնում:
- Համակարգ թիվ 13-ը Սպանդարյան համակարգն է, որտեղ նախատեսվում է.
- Սպանդարյանի ինքնահոս համակարգի կառուցում,
 - 160 հա ներտնտեսական ցանցերի վերականգնում:
- Համակարգ թիվ 14-ը Կապանի համակարգն է, որով նախատեսվում է.
- Ծավ – Շիկահողի և Նորաշենիկի ինքնահոս համակարգի կառուցում,
 - 120 հա-ի վրա ներտնտեսական ցանցերի վերականգնում:
- Համակարգ թիվ 15-ը Գորիսի համակարգն է, որով նախատեսվում է.
- 4 պոմպակայանների վերականգնում,
 - 240 հա ներտնտեսական ցանցերի վերականգնում:
- Համակարգ թիվ 16-ը Լուռու համակարգն է, որով նախատեսվում է.
- Ամրակիցի ինքնահոս համակարգի կառուցում,
 - 400 հա ներտնտեսական ցանցերի վերականգնում:
- Համակարգ թիվ 17-ը Գետիկի համակարգն է, որտեղ նախատեսվում է.
- Սպիտակի ինքնահոս համակարգի կառուցում,
 - 370 հա ներտնտեսական ցանցերի վերականգնում:
- Համակարգ թիվ 18, Նոյեմբերյան համակարգն է, որով նախատեսվում է.
- 6 պոմպակայանների վերականգնում,
 - 314 հա-ի ներտնտեսական ցանցերի վերականգնում:
- Համակարգ թիվ 19, Բերդի համակարգով նախատեսվում է.
- Բերդի ինքնահոս համակարգի կառուցում,
 - 130 հա ներտնտեսական ցանցերի վերականգնում:
- Համակարգ թիվ 20-ը Իջևանի համակարգն է, որով նախատեսվում է.
- Գետահովիտ – Լուսածորի ինքնահոս համակարգի կառուցում,
 - 5 պոմպակայանների վերականգնում,
 - 170 հա ներտնտեսական ցանցերի վերականգնում:

Համակարգ թիվ 21-ը Կոտայքի համակարգով նախատեսվում է.

- Պտղնու ինքնահոս համակարգի կառուցում,
- 4 պոմպակայանների վերականգնում,
- 450 հա ներտնտեսական ցանցերի վերականգնում:

Համակարգ թիվ 22, այստեղ ներառվում է վերոհիշյալ համակարգերում չընդգրկված 8 ջրօգտագործող ընկերությունների ներտնտեսական ցանցերի վերականգնում: Դրանք են՝ Գավառի, Խնձորուտի, Հախումի, Որոտանի, Թոլորսի, Չորերի, Բոնակոթի և Հրազդան – Ջուրի ընկերությունները:

Համակարգ թիվ 23. Արարատյան դաշտավայրի դրենաժային համակարգի վերականգնում:

Աղքատության կրճատման երկրորդ նախապայմանը գյուղատնտեսության աճի արագացման գյուղական ճանապարհների բարեկարգումն է, ներդրումների արդյունքում կվերանորոգվեն շուրջ 1072 կմ երկարությամբ համայնքային ճանապարհներ և «չափազանց անբարեկարգ» կամ «անբարեկարգ» վիճակից կդառնան լավ վիճակում գտնվող ճանապարհներ:

Հաշվետվությունում ներկայացվել են գործունեությունների արդյունքում հնարավոր ազդեցություններ, ենթադրվում է, որ վերականգնվող ճանապարհների մեծամասնությունը կունենա լոկալ, կարճատև, աննշան ազդեցություններ:

Ոռոգման նպատակով իրականացվող վերանորոգման և վերականգնողական աշխատանքների ազդեցությունում կգերակշռի դրական ազդեցությունը:

Համեմատաբար մեծ ազդեցություն շրջակա միջավայրի վրա հնարավոր է, նոր կառույցների իրականացման արդյունքում, որի նվազեցմանն ու կանխմանն ուղղված նախատեսվել են մի շարք միջոցառումներ: Ներկայացված է «գրոյական» տարբերակի այլ ընտրանքը և դրա բացասական հետևանքները: Վերլուծության արդյունքում ակնհայտ է, որ ծրագրի չիրականացման դեպքում հնարավոր բացասական հետևանքները զգալիորեն գերակշռում են այն բնապահպանական ռիսկերը, որոնք կապված են ծրագրի իրականացման հետ::

Ծրագրի իրականացման արդյունքում կռոզվեն 131629 հա հողատարածքներ, ոռոգելի հզորությունները կընդլայնվեն 38770 հա-ով, կբարելավվի Արարատյան դաշտավայրի 3000 հա հողատարածքների մեկտրատիվ վիճակը, ջրի կորուստների տարեկան կրճատումը կկազմի 166.28 մլն խմ:

Փորձաքննական պահանջ

Մինչև ծրագրի շրջանակներում նախատեսված նոր օբյեկտների կառուցման և հների վերակառուցման իրականացումը անհրաժեշտ է համապատասխան նախագծային փաստաթղթերը՝ համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին» ՀՀ օրենքի, սահմանված կարգով ներկայացնել ՀՀ բնապահպանության նախարարություն՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Բնապահպանական փորձաքննություն» ՊՈԱԿ-ը Հազարամյակի մարտահրավերների հիմնադրամի շրջանակներում օժանդակության տրամադրման հայտի «Շրջակա միջավայրի ազդեցության գնահատման» (ՇՄԱԳ) վերաբերյալ տալիս է դրական եզրակացություն՝ վերը նշված պահանջը պարտադիր կատարելու պայմանով:

Փորձագետ՝  Ա. Դեմոյան